

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար՝

Հակոբ ԲԱԼԱՍՅԱՆԻՆ

ՀՀ քաղաքացի Սերոբ Անտինյանից

Ք. Աբովյան, Հանրապետության 1/5, բն.19

Հեռ.՝ 094 23 64 50

Դ Ի Մ Ո Ւ Մ

Հարգելի պարոն Բալասյան

Հանդիսանում եմ Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղի Շինարար թաղամասի 3-րդ փող. 58 հասցեում գտնվող բնակելի տան և հողամասի (կադաստրային ծածկագիրը՝ 07-051-0158-0048) սեփականատեր: Շուրջ 20 տարի փաստացի տիրապետում եմ հողամասին սահմանակից 0158-0093 կադաստրային համարի տակ հաշվառված համայնքային սեփականություն հանդիսացող հողակտորին, որն ապահովում է սեփականության իրավունքով ինձ պատկանող հողամասի միակ ելքը դեպի ճանապարհ: Սահմանակից հողամասի դիրքը և ռելիեֆը (հողամասի զգալի հատվածը ժայռ է) թույլ չեն տալիս այն կառուցապատել այլ կերպ, քան իմ սեփականության իրավունքով պատկանող հողամասի սպասարկման համար նախատեսված օժանդակ շինություններով: Իմ հողամաս մուտքը, այդ թվում՝ տրանսպորտային միջոցով, հնարավոր է միայն սահմանակից հողամասով: Սահմանակից հողամասը փաստացի սահմանագատված է և տիրապետվում է իմ կողմից տևական ժամանակ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետը և ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 1, 2, 3, 7 ենթակետերը, 2-րդ կետը, խնդրում եմ սեփականության իրավունքով ինձ պատկանող հողամասի ընդլայնման նպատակով վերջինիս սահմանակից 0158-0093 կադաստրային համարի տակ հաշվառված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքի եղանակով օտարել ինձ:

Կից՝


1. Սեփականությանս վկայականի պատճենը,
2. Տեղեկանք գույքի բնութագրերի և դրա նկատմամբ սեփականության իրավունքի վերաբերյալ,
3. Հարևանների համաձայնությունը հողամասը ուղղակի վաճառքի եղանակով ինձ օտարելու մասին:

Հարգանքով՝

Ս. Անտինյան



17.01.2023 թ






ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 2 մարտի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՍԵՐՈԲ ԱՆՏԻՆՅԱՆ ԷԴՎԱՐԴԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Շինարար թաղամասի 3-րդ փողոց 58 բնակելի տուն

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր ստորագրված 25/02/2022թ. Արաբկիր սպասարկման գրասենյակում

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-051-0158-0048

Մակերեսի չափը (հա)՝ 0.05045

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնակելի կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 02032022-07-0113, գաղտնաբառ՝ A3SVGUA1SADX

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով